



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մի քանի տասնամյակ առաջ Արարարյան դաշրի հողերը ոռոգելու և էլեկտրաէներգիա սրանալու համար սկսեցին օգտագործել Սևանա լճի ջուրը: Այդ նպատակով Հրազդան գետի ակունքային մասում կառուցվեց էլեկտրակայան և մեծացրին ջրի արտահոսքը լճից: Սևանա լճի մակարդակը սկսեց արագորեն, իսկ մակերեսը՝ կրճարվել: Արեգակի ճառագայթները սկսեցին թափանցել լճի հատակը և արագ զարգացող ջրային բուսականությունը սպառնում էր լճի ճահճացմանը: Լճի մակարդակը վերականգնելու համար որոշվեց Արփա գետի ջրերի մի մասը ուղղել դեպի Սևանա լիճ: Լիճը փրկելու նպատակով Վարդենիսի լեռների տակով, բավական դժվար պայմաններում կառուցվեց 48.3 կմ երկարությամբ Արփա-Սևան ջրարար թունելը: Այն աշխարհում ամենաերկար ջրարար թունելներից է: 2004 թվականին այս ջրարարին միացավ 21.6 կմ երկարությամբ Որոտան -Արփա ջրարար թունելը: Սևանա լճի մակարդակը աստիճանաբար սկսեց բարձրանալ և ներկայումս գրավում է ծովի մակարդակից 1900.6 մետր բարձրության վրա:



Հեղաքրքրական է, որ Սևանա լիճի ափին, հենց այն տեղում ուր ավարտվում է Որոտան-Արփա-Սևան ջրարարը, պահպանվել է ուրարտական մի սեպագիր արձանագրություն:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ արձանագրության վերջին տեղերի տակ ուրվագծվում է լճի ջրերի դարերի ընթացքում թողած հետքը: